




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

16

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԹԵՔՆԵԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հիմնալ 1922-ին



Կ Վ ա յ Ե լ Է

Խորհրդային Հայաստանի
Արտասահմանեան Տնտեսական Ներկայացուցչի
Հովանաւորութիւնը

Ն Ի Ի Ե Օ Ր Կ
1 0 2 3

6

4-21

6
4-21

12002

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԹԵԲՆԻԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

I

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԸ

Ընկերության անունն է՝ Խորհրդային Հայաստանի Թեխնիկական Օգնութեան Ընկերութիւն. կրճատւած ձեւն է՝ Խ. Հ. Թեք. Օդ. Ընկ.: Անունի անգլիերէն դորձածութիւնն է՝ **Society For Technical Aid to Soviet Armenia.**

II

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԳԱՆՇԱՆԸ

Ընկերության խորհրդանշանն է՝ կրկնակ շըրջանակներու մէջ՝ Արարատը, ստորոտը՝ Հայ դիւզացին արօրով. երկու կողմերը ցորենի խուրձեր. ասոնց բոլորաիքը կրկնակ շրջանակներու միջեւ՝ ընկերության անունը. շրջանակներէն դուրս՝ դորձարանի ծխացող ծխնելոյղներ, վայրաշարժ, վոխադրութեան դանազան միջոցներ եւ երկրադորձական մեքենաներ:

55831-ահ III

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ընկերութիւնը կազմակերպւած է եւ կդործէ Միացեալ Նահանգներու եւ Կանադայի մէջ:

2010



1082-69

IV

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ընկերութեան նպատակն է՝ Խորհրդային Հայաստանի տնտեսական վերաշինութեանը դործնական օժանդակութիւն բերել Ամերիկայէն:

V

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ

1. Հաւաքել մեքենադիտութեան, հողագործութեան, տեխնիկայի եւ ճարտարաբանութեան զանազան ճիւղերու վերաբերեալ դրականութիւն, մասնաւոր հետազոտութիւններ, դժաւորութիւն եւայլն:

2. Արձանագրել եւ կազմակերպել Միացեալ Նահանգներու եւ Կանադայի մէջ ապրող բոլոր այն բանւորները, արհեստաւորները եւ մասնագէտները որոնք կրնան օգտակար ուժեր դառնալ թեքնիկական-տնտեսական օժանդակութեան համար եւ ցանկութիւն կաշտեն վերադառնալ Խորհր. Հայաստան եւ մասնակցել անոր վերաշինական դործին:

3. Հիմնել դպրոցներ, դասընթացքներ, արհեստանոցներ, աշխատանոցներ՝ երկիր մեկնիլ վաճառքողներուն տալու համար հիմնական եւ նպատակաւոր պատրաստութիւն:

4. Զանալ դնացող խումբերը գինել անհրաժեշտ դործիքներով, մեքենաներով եւ ամեն տեսակ նիւթերով ու պիտոյքներով, որպէսզի անոնք կարենան իրենց սովորածները լաւագոյն եւ արդիւնաւոր կերպով դործադրել երկրի մէջ:

VI

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ
Անդամներու իրաւունքները եւ
Պարտականութիւնները:

1. Ամեն անհատ, առանց սեռի խտրութեան, կրնայ անդամակցել ընկերութեանս, եթէ կընդունի նպատակը եւ կենթարկուի կանոնադրի տրամադրութեանց:

2. Ընկերութեանս անդամակցողը նախ պէտք է լեցնէ այդ նպատակի եւ վիճակադրութեան համար պատրաստած գիմումնադիրը եւ ստորագրելով վերադարձնէ դայն մասնաճիւղի վարչութեան: Վերջինս պատճէնն առնելով՝ իսկականը կուղարկէ կեդր. Գործ. Մարմինն, մասնաճիւղի նկատողութիւնները աւելցնելով վրան:

3. Ընկերութեանս ամեն մէկ անդամը կ'մասնակցի իր նպատակն մասնաճիւղի ժողովներուն՝ քէի իրաւունքով: Կրնայ ընտրել եւ ընտրուիլ համապատասխան ամեն պաշտօնի համար:

4. Ընկերութեան ամեն մէկ անդամը պարտաւոր է ունենալ ընկերութեան անդամատետր:

5. Մասնաճիւղէ մը ուրիշ մասնաճիւղ փոխադրելու համար պէտք է առնել պատկան մասնաճիւղի հաւանութիւնը:

6. Ամեն անդամ պարտաւոր է վճարել մուտքի տուրք՝ նաւադոյն 50 սէնթ, եւ ամսական 50 սէնթ օղամալճար:

7. Դասընթացներու եւ աշխատանոցներու համար մասնաճիւղի վարչութիւնը կնշանակէ չափաւոր վճարում՝ Կեդ. Գործ. Մրմ.ի հաւանութեամբ:

8. Տուրքերը չվճարելու պատճառաւ հրաժարեցաւ անդամ մը կրնայ կրկին ընդունել, երբ իր յետնեալ բոլոր տուրքերը կվճարէ: Եթէ անդամակցութենէ դադարեցումը վեց ամիսէն աւելի է եղած, ախտի վճարէ նաեւ մուտքը:

9. Խորհրդային Հայաստանի իշխանութեան դէմ դաւադրողներ չեն կրնար ընկերութեան: անդամ դառնալ:

VII

ԴԻԱԲԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ընկերութեանս դրամական աղբիւրներն են՝

ա. Անդամավճարներ

բ. Անհատական նւէրներ

գ. Հանգանակութիւններ

դ. Զանազան ուրիշ ձեռնարկներ, ինչպէս օրիւնակ՝ խնջոյքներէ, ներկայացումներէ, պարահանդէսներէ, երեկոյթներէ, դասախօսութիւններէ, վիճակահանութիւններէ դոյացած դումարներ:

VIII

ՄԱՍՆԱՃԻՂՆԵՐ

1. Ընկերութեանս կազմակերպական միաւորն է մասնաճիւղը որու անդամներու նաղադոյն թիւն է 5: Են պակաս թիւ ներկայացնող տեղի անդամները կմիանան մօտակայ քաղաքի մասնաճիւղին:

2. Բացառիկ պարագաներու տակ՝ ընկերութեան Կեդր. Գործ. Մարմնի հաւանութեամբ կարելի է կազմել 3 հոգիէ բաղկացած խմբեր, որոնք ուղղակի յարաբերութեան մէջ կըլլան Կեդրոնի հետ եւ կամ անոր կարգադրութեամբ ուրիշ մարմնի հետ:

3. Կեդր. Գործ. Մարմնի հաւանութեամբ՝ միւս եւնոյն քաղաքի մէջ կարելի է ունենալ մէկէ աւելի մասնաճիւղեր:

4. Մասնաճիւղը կունենայ իր վարչական մարմինը՝ բաղկացած 3 կամ 5 հոգիէ՝ ըստ մասնաճիւղի մեծութեան եւ գործերու ընդարձակութեան:

5. Մասնաճիւղի վարչութիւնը կվարէ տեղական բոլոր գործերը եւ պատասխանատու է մասնաճիւղային բոլոր գործերուն համար:

6. Մասնաճիւղը իր վարչութեան եւ կամ ուրիշ յանձնախումբերու միջոցաւ կարճաճառքէ եւ կկադմակերպէ իր սահմաններուն մէջ եղած թեքնիկական եւ ճարտարարեւեստական ուժերը, կսարքէ ընդհանուր զարգացողական բնոյթ ունեցող կամ մասնադիտական դասընթացներ՝ նախօրօք Կեդ. Գոր. Մարմնի թելադրութիւնները առնելով:

7. Մասնաճիւղեր պարտաւոր են անդամական ժողով դումարել առնուազն ամիսը մէկ անգամ:

8. Մասնաճիւղերը իրաւունք չունին ընկերութեան անունով հանգանակութիւն ընելու՝ առանց Կեդր. Գործ. Մարմնի հաւանութեան:

9. Մասնաճիւղերը պարտաւոր են դանձաւ անդամավճարներու երեք չորրորդը ուղարկել Կեդր. Գործ. Մարմնի:

Գործ. Մարմինն, մնացեալ՝ մէկ չորրորդը՝ կրնան
գործածել տեղական պէտքերուն համար: Իսկ միւս
բոլոր հասոյթները պիտի ուղարկւին Կեդրոնին:

10. Մասնաճիւղերը երեք ամիսը անդամ մը ի-
րենց գործունէութեան համար տեղեկադիր եւ հաշ-
ւեցոյց պիտի ներկայացնեն Կեր. Գործ. Մարմինն:

11. Մասնաճիւղ մը կադրութեանն անմիջապէս
յետոյ պիտի վաւերացուի Կեդր. Գործ. Մարմինն:

12. Ուեէ մասնաճիւղի գոյութեան դադարման
պարագային՝ անոր մօտ եղած բոլոր գոյքերը,
գրամը եւ այլն կ'իտխանցւին ընկերութեանս Կեդր.
Գործ. Մարմինն:

IX

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԻՆ

Կազմը, Իրաւունքները, Պարտականութիւնները

1. Կեդր. Գործ. Մարմինը ընկերութեանս բարձ-
րագոյն վարիչ մարմինն է բաղկացած՝ 7 անդամ-
ներէ եւ 3 փոխ-անդամներէ, որոնք կ'ընտրւին ըն-
կերութեանս Պատգմ. Ժողովէն եւ կ'վարեն ընկե-
րութեան գործերը՝ Պատգմ. Ժողովի ղեկավարման
մաններուն մէջ, մէկ տարւան ժամանակամիջոցով:

2. Կեդր. Գործ. Մարմնի ուեէ մէկ անդամի հրա-
ժարելու կամ հեռանալու պարագային՝ առաւելա-
գոյն քէ ստացած փոխ-անդամը կանցնի անոր տեղ:

3. Կեդր. Գործ. Մարմինը կ'վարէ ընկերութեան
պրոպագանդը եւ մասնաճիւղերը տեղեկի կ'պահէ
ընկերութեան ընդհանուր գործերու վերաբերմամբ:

4. Կեդր. Գործ. Մարմինը յարաբերութիւն կ'պա-
հէ Խորհրդային Հայաստանի կառավարութեան հետ
պատկան մարմիններու եւ անձերու միջոցաւ, կը-
վայելէ անոր հովանաւորութիւնը, եւ իր գործու-
թիւնը կ'յարմարցնէ Խորհրդային կառավարութեան
պետական մարմիններու կողմէ ներկայացուած պա-
հանջներուն:

5. Կեդր. Գործ. Մարմնի անդամներու միջեւ
անհամաձայնութիւն ծագելու պարագային՝ խըն-
դիքները կ'կարգադրւին բոլոր անդամներու հաւա-
քական քէներու երկու երրորդի որոշումով: Դժ-
գոհ մնացած կողմը ենթարկւելով հանգիստ տրած
որոշումին, կ'ընայ բոլոր ներկայացնել յաջորդ
Պատգմ. Ժողովին:

6. Կեդր. Գործ. Մարմինը երեք ամիսը անդամ
մը հաշիւ եւ սեղեկութիւն կ'տայ մասնաճիւղերուն:

7. Կեդր. Գործ. Մարմինը իր գործունէութեան
համար պատասխանատու է Պատգմ. Ժողովին:

8. Պատգմ. Ժողովէն անմիջապէս յետոյ՝ Կեդր.
Գործ. Մարմնի կողմէ ընկերութեան տարեկան հա-
շիւը կ'հրատարակուի թերթերու մէջ:

X

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Պատգմ. Ժողովը կ'ներկայացնէ ընկերու-
թեանս ղեկավարին մարմինը:

2. Պատգմ. Ժողովը տեղի կ'ունենայ տարին մէկ
անգամ, բոլոր մասնաճիւղերու մասնակցութեամբ:

3. Մինչեւ 25 անգամ ունեցող մասնաճիւղերը.

կուղարկեն 1 պատգամաւոր. իսկ իւրաքանչիւր բաւելածական 25 անդամի համար 1 պատգամաւոր:

4. Պատգամաւորներու ճանապարհածախսերը կը հողացելն մասնաձիւղերու կողմէ՝ տեղական միջոցներով:

5. Հեռաւոր վայրերու մասնաձիւղերը կրնան իրենց պատգամաւոր նշանակել՝ Պատգամ. Ժողովի վայրին մօտ գտնուող ուրիշ մասնաձիւղերու անդամներէ:

6. Մասնաձիւղերը նիւթական եւ բարոյական զրաւոր տեղեկագիր կներկայացնեն Պատգամ. Ժողովին՝ իրենց պատգամաւորներու միջոցաւ:

7. Իւրաքանչիւր պատգամաւոր Պատգամ. Ժողովի մէջ միայն մէկ ձայն կրնայ ներկայացնել:

8. Արտակարգ Պատգամ. Ժողով կարելի է դուրսել. ա) երբ կեդր. Գործ. Մարմինը մեծամասնութեամբ հարկ կտեսնէ. բ) երբ մասնաձիւղերու երկու երրորդը պահանջէ այդ:

9. Պատգամ. Ժողովը իր բոլոր աշխատանքները սւտարտելէ ետք՝ մասնակցող պատգամաւորներու աւելադն երկու երրորդի քւէով կընտրէ կեդր. Գործադիր Մարմինը:

10. կեդր. Գործ. Մարմինը Պատգամ. Ժողովին կմասնակցի իր կազմով եւ 1 քւէով:

XI

ԳՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԳՈՐԾ ՈՒՆԵՑՈՂ ԲՈՂՈՐ ԱՆՁՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1. Ընկերութիւնս որդեգրած ըլլալով՝ դրամա-

կան հաշուաւութեան խստապահանջ սկզբունք մը, կպահանջէ որ դրամական խնդիրներու հետ դործ ունեցող բոլոր մարմինները եւ անձերը հաշիւները պահեն մաքուր եւ անառարկելի եղանակով: Բոլոր հաշիւները հիմնաւորւած պիտի ըլլան համապատասխան վաւերացութեամբ:

2. Ընկերութեան ընդհ. դանձապահը ընկերութեան դրամները կպահէ՝ կեդր. Գործ. Մարմին կողմէ մատնանշւած պանքայի մը մէջ: Գանձապահը կրնայ պանքայէն դրամ վերցնել միայն ստեղծուած պետի, քարտուղարի եւ իր ստորագրութեամբ:

XII

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍՆԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ընկերութեանս բոլոր մասնաձիւղերու, խումբերու եւ կեդր. Գործ. Մարմնի մօտ գտնուած զոյքերը եւ դրամները կկազմեն ընկերութեանս սեփականութիւնը:

XIII

ԼՈՒԾՈՒՄ

Ընկերութեանս դործունէութեան վերջ տրելու պարագային՝ եղած զոյքերու եւ դրամներու վերաբերմամբ կարգադրութիւն կըլլայ Խորհրդային Հայաստանի տնտեսական ներկայացուցչի կամ կառավարութեան ոնէէ հեղինակաւոր ներկայացուցչի հրահանգին համաձայն:

XIV

ԿԱՆՈՆԱԳՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ, ՓՈՓՈԽՈՒՄ
ՆԻ ՎԱՒԵՐԱՑՈՒՄ

1. Այս կանոնադրութիւնը դործադրութեան կը
մտնէ անմիջապէս:

2. Կանոնադրային ուէլ լիտիտութիւն կարե-
լի է ընել միայն Պատգմ. Ժողովի երկու երրորդի
քւէով:

Այս վերաքննած կանոնադրութիւնը ընդուն-
ւեցաւ եւ վաւերացեցաւ ընկերութեան անդրանիկ
Պատգմ. Ժողովի կողմէ:

Նիւ Եօրք, Ապրիլ 1, 1923



16

«Ազգային գրադարան»



NL0071035

